



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՄԵԿՆԵՑԱՒ ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Շաբաթ, 22 Նոյեմբերին մեկնեցաւ Վատիկան, միանալու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին ու մասնակից դառնալու Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետ Ն.Ս. Պենետիկոս ԺՁ. Պապին Նորին Սուրբ Օծութեան պաշտօնական այցին ու հանդիպումներուն:

Մօտաւորապէս մէկ շաբթուան վրայ երկարող այս այցելութենէն ետք, Առաջնորդ Սրբազանը պիտի անցնի Լիբանան, մեր Թեմի պատգամաւորներուն հետ մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին, որ պիտի կայանայ 2էն 6 Դեկտեմբերին, Կաթողիկոսութեան մայրավանքի յարկին տակ: Նշենք, որ մեր Թեմը 15 պատգամաւոր ունի այս ժողովին, որ ընթացիկ աշխատանքներու արդիւնքին քննարկումէն անդին, օրակարգի վրայ ունի մեր եկեղեցին, սերունդները եւ հայրենիքը յուզող անմիջական հարցեր:

Առաջնորդ Սրբազանը Թեմ պիտի վերադառնայ Ազգ. Ընդհանուր Ժողովի աւարտէն ետք: Անոր բացակայութեան շրջանին, Թեմիս Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի վստահուած է Ազգ. Առաջնորդարանի անմիջական աշխատանքներուն հետեւելու ու հարցերու յանձանձման աշխատանքը:

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

### COMMUNIQUE

## **PRELATE DEPARTS FOR THE VATICAN AND ANTELIAS**

On Saturday, November 22<sup>nd</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for the Vatican to join the delegation of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, on an official visit to H.H. Pope Benedict XVI.

Following the weeklong visit, the Prelate will head to Lebanon for the Catholicosate General Assembly which will take place from December 2<sup>nd</sup> to the 6<sup>th</sup> in Antelias. The Western Prelacy has fifteen delegates at the Assembly.

In the Prelate's absence, Religious Council Chairman Very Rev. Fr. Muron Aznikian has been assigned to oversee the daily operations of the Prelacy.

**Western Prelacy Secretariat**